ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 2.
Հեռ. 52-19-64. Ֆաքս 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

N01/10/5135-13
16.12.13թ.

Ձեր № h-66-h-2
առ 03.12.2013թ.

«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» Հ/Կ-Ի ՆԱԽԱԳԱՀ
«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ
ՊԱՐՈՆ ԷԴԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր վերոնշյալ գրության տեղեկացնում եմ, որ ՌԴ «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ-ի և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի միջև բնական գազի մատակարարման մասին պայմանագրի համաձայն ՀՀ սահմանի վրա բնական գազի վաճառքի գինը՝ 1000 խմ համար 180 ԱՄՆ դոլարը 2011թ. ապրիլի 1-ից սկսած աստիճանաբար բարձրացվել է և 2013թ. ապրիլի 1-ից սահմանվել է 270 ԱՄՆ դոլար:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի համար հաստատված՝ 01.04.2010թ.-06.07.2013թ. ժամանակաշրջանի համար բնական գազի վաճառքի սակագների հաշվարկներում գազի ձեռքբերման գինը ՀՀ սահմանին 1000 խմ համար սահմանված է եղել 180 ԱՄՆ դոլար, իսկ 07.07.2013թ.-ից - 189 ԱՄՆ դոլար՝ ՀՀ սպառողներին վաճառվող բնական գազի սակագները չբարձրացնելու նպատակով: Դրա արդյունքում՝ 2011թ. ապրիլի 1-ից սկսած մինչև 2013թ. հուլիսի 6-ը ընկած ժամանակահատվածում «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ում առաջացել է շուրջ 300 մլն ԱՄՆ դոլարի պարտք «Գազպրոմ էքսպորտ» ՍՊԸ-ի հանդեպ:

ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ս.թ. դեկտեմբերի 2-ին կնքված համաձայնագրով (այսուհետև՝ համաձայնագիր)՝ ՀՀ սահմանի վրա գազի ձեռքբերման և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի համար հաստատված գազի վաճառքի սակագնի հաշվարկի հիմքում դրված գազի գների տարբերության մի մասը՝ 155 մլն ԱՄՆ դոլար պարտքը ՀՀ կառավարությունը մարում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ՀՀ սեփականությունը հանդիսացող 20.0 % բաժնեմասը ռուսական կողմի սեփականությանը փոխանցելով: Գների տարբերությամբ առաջացած պարտքի մնացած մասը ռուսական կողմը զիջում է:

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Կատարող՝ Լ. Հարությունյան
Հեռ. 528848